Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«18» դեկտեմբերի 2025 թ. թիվ 221 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կամ Կենտրոն) ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ ՈՒԽ) Կենտրոնի մագիստրանտների, ինչպես բարձրագույն կրթության երրորդ մակարդակում կրթություն ստացողների (հայցորդ, ասպիրանտ) կամավորության սկզբունքով ձևավորվող, ինքնակառավարվող, ընտրովի, ներկայացուցչական մարմին է:

1.2 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ն ապաքաղաքական, ինքնակառավարվող և ներբուհական ուսանողական կառույց է:

1.3 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ն պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.4 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, «Կրթության մասին» ՀՀ օրենքին, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքին, Կենտրոնի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.5 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ն ունի պաշտոնական էջ ԳԿՄԿ-ի կայքում, ինչպես նաև ՈՒԽ խորհրդի որոշմամբ կարող է ունենալ խորհրդանշան, հուշամեդալներ, ՈՒԽ պատվավոր անդամի կրծքանշան և այլն:

1.6 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ի լրիվ անվանումն է.

հայերեն՝ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողական խորհուրդ

ռուսերեն՝ Студенческий совет Международного научно-образовательного центра Национальной академии наук Республики Армения

անգլերեն՝ Student Council of the International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia

Իսկ կարճ անվանումները՝

հայերեն՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ,

ռուսերեն՝ СС МНОЦ НАН РА,

անգլերեն՝ SC ISEC NAS RA:

1.7 Կենտրոնի ՈՒԽ-ն գործում է հետևյալ հասցեում՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24/6, 4-րդ հարկ:

2. ՈՒԽ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՈՒԽ-ի նպատակներն ու խնդիրներն են.

ա/ պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները:

բ/ իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն և ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը:

գ/ ապահովել ուսանողների մասնակցությունը Կենտրոնի գործունեությանը:

դ/ Կենտրոնի համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողների կողմից բարձրացված հարցերը:

ե/ մասնակցել և աջակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

զ/ ուսանողների գիտական և կրթական առաջընթացի ապահովման նպատակով կազմակերպել համապատասխան սեմինարներ և գիտաժողովներ:

է/ խթանել ուսանողների ստեղծագործական, հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացումը՝ կազմակերպելով ուսանողների ազատ ժամանցին և հանգստին առնչվող միջոցառումներ:

ը/ աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը՝ գտնելով համապատասխան կրթական ֆոնդեր և կրթության զարգացմանը աջակցող այլ հովանավորներ:

թ/ միջոցներ ձեռնարկել ուսանողների զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ համագործակցելով համապատասխան գործատուների հետ:

ժ/ համակարգել և ապահովել շարունակական համագործակցությունը ամբիոնների, ԳԿՄԿ ուսումնամեթոդական բաժնի, ԳԿՄԿ դեկանատի, գիտական խորհրդի, Հանրային կապերի և կարիերայի բաժնի և Կենտրոնի այլ ստորաբաժանումների հետ:

2.2 ՈՒԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով վերոնշյալ նպատակներից և խնդիրներից:

2.3 ՈՒԽ-ն կարող է համագործակցել ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ ապաքաղաքական կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով համագործակցության և փոխշահավետության հիմունքներով:

3. ՈՒԽ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 ՈՒԽ կառավարման մարմիններն են՝ ՈՒԽ նախագահությունը և նախագահը:

3.2 ՈՒԽ նախագահը, փոխնախագահները և քարտուղարը ընտրվում են ՈՒԽ կողմից՝ անդամների ձայների մեծամասնությամբ և կազմում են ՈՒԽ նախագահությունը:

3.3 Ըստ անհրաժեշտության ՈՒԽ-ի որոշմամբ կարող են ստեղծվել նաև ժամանակավոր հանձնաժողովներ կամ ակումբներ: ՈՒԽ հանձնաժողովների և ակումբների ղեկավարները ընտրվում են ՈՒԽ նախագահության կողմից:

3.4 ՈՒԽ իրավասության մեջ են մտնում հետևյալ գործառույթները ՝

ա) հաստատում է ՈՒԽ տարեկան աշխատանքային պլանը, որոշում է գործունեության կարևորագույն ուղղությունները, առաջարկներ է ներկայացնում ԳԿՄԿ գիտական խորհրդին, ընդունում է ՈՒԽ կանոնադրությունը, անհրաժեշտության դեպքում ներկայացնում է նոր կանոնադրության նախագիծ, որը խորհրդի նախագահը ներկայացնում է Կենտրոնի գիտական խորհրդի հաստատմանը:

բ) ՈՒԽ նիստը իրավազոր է, եթե մասնակցել է ՈՒԽ անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ:

դ) ՈՒԽ տարեկան աշխատանքները իրականացվում են համաձայն ՈՒԽ խորհրդի կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանի:

3.5 *ՈՒԽ անդամի իրավունքները և պարտականությունները*՝

ա) ընտրել և ընտրվել ՈՒԽ ղեկավար մարմիններում,
բ) ՈՒԽ ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել ՈՒԽ գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
գ) ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,
դ) օգտվել ՈՒԽ իրավական, ֆինանսական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից,
ե) իրազեկ լինել ՈՒԽ գործունեությանը,
զ) ներկա գտնվել ՈՒԽ նախագահության նիստերին,
է) կատարել ՈՒԽ նախագահի և փոխնախագահների կողմից իր վրա կամավոր սկզբունքով դրված առանձին պարտականություններ, օրինակ՝ հետևել տեղեկատվական հարթակին, կատարել համակարգող աշխատանքներ և այլն:
ը) իր գործունեությամբ և վարքով բարձր պահել ՈՒԽ հեղինակությունը, առանց ՈՒԽ նախագահի կողմից տրված լիազորության չներկայանալ ՈՒԽ անունից,
թ) գործել սույն կանոնադրությանը համապատասխան:

3.6 *ա/ ՈՒԽ նախագահի գործառույթները*՝

1) Հանդես է գալիս ՈՒԽ անունից և ղեկավարել ՈՒԽ աշխատանքները,
2) Հանդես է գալիս որպես Կենտրոնի գիտական խորհրդի ձայնի իրավունքով օժտված

անդամ,

3) ներկայացնում է ՈՒԽ-ն ՀՀ և արտերկրի պետական և ոչ պետական մարմիններում,
4) հրավիրում է ՈՒԽ հերթական և արտահերթ նիստեր,
5) ապահովում է կապը ուսանողների հետ,
6) առնվազն ուսումնական տարին երկու անգամ հաշվետվություն ներկայացնել ընթացիկ և կատարված աշխատանքների մասին:
7) ապահովել ուսանողության կապը Կենտրոնի տարբեր ստորաբաժանումները համակարգող մասնագետների հետ,
8) հաստատել ՈՒԽ հիմնական միջոցառումների և աշխատանքների տարեկան պլանները, ծրագրերը և հսկել դրանց կատարման ընթացքը,
9) ՈՒԽ նախագահի մասնակցությունը պարտադիր է Կենտրոնի բոլոր այն նիստերին, որոնց օրակարգում ներառված են ուսանողների իրավունքներին, պարտականություններին կամ շահերին վերաբերող հարցեր:

բ/ ՈՒԽ փոխնախագահների իրավասության մեջ են մտնում հետևյալ գործառույթները՝

1) Իրականացնում են ՈՒԽ նախագահի կողմից կամավոր սկզբունքով վերապահված առանձին գործառույթներ:
2) ՈՒԽ փոխնախագահները, նախագահի հանձնարարությամբ կամ վերջինիս բացակայության դեպքում, իրականացնում են նախագահի գործառույթները: Նրանք իրավունք ունեն ներկայացնելու ՈՒԽ-ն տարբեր միջոցառումներում, նիստերում և պաշտոնական հանդիպումներում: Փոխնախագահները կարող են նաև սահմանված կարգով համակարգել ՈՒԽ գործունեությունը, վերահսկել ուսանողական նախաձեռնությունների իրականացումը, ղեկավարել առանձին ծրագրեր և աշխատանքային խմբեր, մասնակցել ՈՒԽ ռազմավարական ուղղությունների ձևավորմանն ու որոշումների կայացման գործընթացին՝ նախագահից ստացված լիազորությունների շրջանակներում:

գ/ ՈՒԽ քարտուղարի իրավասության մեջ են մտնում հետևյալ գործառույթները.

1) արձանագրել ՈՒԽ նիստերը,
2) զբաղվել արխիվի հավաքագրման և պահպանման աշխատանքներով,
3) Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակ ներկայացնել ՈՒԽ գործունեության մասին հաշվետվություն:

3.7 ՈՒԽ–ն կարող է ունենալ պատվավոր անդամներ.

ա/ Պատվավոր անդամի կոչումը շնորհվում է ՈՒԽ նախագահության որոշմամբ:
բ/ ՈՒԽ պատվավոր անդամը օգտվում է ՈՒԽ անդամի բոլոր իրավունքներից, բացառությամբ ղեկավար կազմում ընտրվելու իրավունքից:

գ/ Պատվավոր անդամներ կարող են դառնալ Կենտրոնի ակտիվ շրջանավարտները, գործընկեր բուհի ներկայացուցիչ, գործատու, ՈՒԽ նախկին նախագահները և փոխնախագահները:

3.8 ՈՒԽ նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ, որի օրակարգը սահմանում է ՈՒԽ նախագահը:

3.9 Նիստերի արդյունքներն ամփոփվում են արձանագրությամբ, որտեղ նշվում են նիստին մասնակցած անձանց քանակը, օրակարգը, քննարկվող հարցերի բովանդակությունը, խնդիրներն ու առաջարկությունները, ընդունված որոշումներն ու քվեարկության արդյունքները: Արձանագրությունը ստորագրում են ՈՒԽ-ի նախագահը և քարտուղարը:

4. ՈՒԽ-ԻՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. ՈՒԽ անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր ուսանող, ում ՄՈԳ-ը գերազանցում է 20 բալանոց համակարգում **14 բալը** և ով ընդունում է սույն կանոնադրությունը և իր գործունեությամբ պատրաստ է նպաստելու ՈՒԽ կանոնադրական նպատակների իրագործմանը: Առաջին կուրսեցիների անդամագրվելու դեպքում հաշվի է առնվում նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ը:

4.2 Կենտրոնի ՈՒԽ-ին անդամագրումը տեղի է ունենում տվյալ անձի դիմումի համաձայն, ուղղված Կենտրոնի ՈՒԽ-ի նախագահին:

4.3. ՈՒԽ անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ ՈՒԽ նախագահի՝ տվյալ անդամին ՈՒԽ անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնադրության **3.5** կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.4 ՈՒԽ նախագահի, փոխնախագահների, քարտուղարի հրաժարականի դեպքում ՈՒԽ-ն իր կազմից ընտրում է տվյալ պաշտոնների ժամանակավոր պաշտոնակատարներ:

4.5 Կենտրոնի ՈՒԽ-ի նախագահի լիազորությունների դադարեցումը՝ մինչև ժամեկտի ավարտը, տեղի է ունենում այն դեպքերում, երբ Կենտրոնի ՈՒԽ անդամների կողմից խորհրդի օրակարգում ընդգրկվում է նախագահի լիազորությունների դադարեցման հարցը՝ հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

ա) նախագահի գործունեությունը չի համապատասխանում Կենտրոնի ՈՒԽ-ի կանոնադրական նպատակներին կամ խնդիրներին,

բ) նախագահի գործունեությունը վնասում է Կենտրոնի ՈՒԽ-ի բարի համբավին կամ հեղինակությանը:

Վերոհիշյալ պատճառներով հիմնավորված՝ Կենտրոնի ՈՒԽ խորհրդի կողմից կարող է կայացվել որոշում Կենտրոնի ՈՒԽ նախագահի լիազորությունների դադարեցման վերաբերյալ, եթե այդ որոշմանը կողմ է քվեարկում նիստին ներկա անդամների կեսից ավելին:

5. ՈՒԽ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 ՈՒԽ միջոցները կարող են գոյանալ Կենտրոնի բյուջեից կատարվող նպատակային հատկացումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, Կենտրոնի կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2 ՈՒԽ-ը անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է Կենտրոնի տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

5.3 ՈՒԽ-ի միջոցները օգտագործվում են ՈՒԽ-ի նպատակների և խնդիրների իրականացման համար:

6. ՈՒԽ-Ի ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

6.1 ՈՒԽ-ն կարող է վերակազմակերպվել կամ նրա գործունեությունը կարող է դադարեցվել ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: